

«ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ»

ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԵՎ ԱՆԿԱԽ ԱՌԻԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ

7. Հանձնարարության կամ մասնիկի հաշվառման համակարգի փոփոխությունների մասին հաշվառման փոփոխություն
8. Անվանական հաշվառման փոփոխությունների մասին հաշվառման փոփոխություն
9. "Հաշվառման միջոցների հոսք" զինվորական հաշվառման փոփոխություն
10. Հաշվառման հաշվառման փոփոխությունների կամ հաշվառման փոփոխություն



Audit
ARMENIA

Բովանդակություն

- 3 Անկախ աուդիտորական եզրակացություն
- 6 Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն
- 7 Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն
- 8 Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն
- 9 Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն
- 10 Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

Կ. Հարությունյան
Գլխավոր տնօրեն

2020թ. ապրիլի 29

Երևան, Հայաստանի Հանրապետություն

ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ 2025Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ
ՏԱՐՎԱ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ՀԱՍՏԱՏՄԱՆ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարությունը պատասխանատու է «Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ-ի (այսուհետ՝ «Ընկերություն»)՝ 2025թ դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակը, նույն ամսաթվին ավարտված տարվա գործունեության արդյունքները, դրամական միջոցների հոսքերը և Ընկերության բաժնետիրական կապիտալի փոփոխությունները ճշմարիտ ներկայացնող, ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին (ՖՀՄՍ) համապատասխան, համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար:

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է՝

- ❖ Հաշվապահական հաշվառման քաղաքականության պատշաճ ընտրության և կիրառման համար,
- ❖ Հաշվապահական հաշվառման քաղաքականության մեջ ներկայացվող տեղեկատվության համապատասխանության, վստահելիության, համեմատականության և հասկանալիության համար,
- ❖ Լրացուցիչ բացահայտումների տրամադրման համար, երբ ՖՀՄՍ-ի հատուկ պահանջների համապատասխանությունը բավարար չէ, որպեսզի օգտագործողները պատկերացում կազմեն՝ Ընկերության համախմբված ֆինանսական վիճակի և կատարողականի վրա որոշակի գործարքների, այլ իրադարձությունների և պայմանների ունեցած ազդեցության մասին, և
- ❖ Ընկերության գործունեության անընդհատությունն ապահովելու կարողության գնահատման համար:

Ղեկավարությունը նաև պատասխանատու է՝

- ❖ Ընկերությունում ներքին վերահսկողության արդյունավետ և ողջամիտ համակարգ մշակելու, ներդնելու և պահպանելու համար,
- ❖ Համապատասխան հաշվապահական գրանցումներ վարելու համար, որոնք բավարար կլինեն Ընկերության գործառնությունները արտացոլելու, ներկայացնելու և ցանկացած ժամանակ Ընկերության ֆինանսական վիճակը ողջամիտ ճշգրտությամբ բացահայտելու համար, ինչպես նաև հնարավորություն կընձեռեն ղեկավարությանը հավաստիանալ, որ Ընկերության ֆինանսական հաշվետվությունները համապատասխանում են ՖՀՄՍ-ներին,
- ❖ ՀՀ օրենսդրության և հաշվապահական ստանդարտների պահանջներին համապատասխան հաշվապահական հաշվառում վարելու համար,
- ❖ Ընկերության ակտիվների անվտանգության ապահովմանն ուղղված՝ խելամիտ քայլերի իրականացման համար, և
- ❖ Խարդախությունների և նմանատիպ այլ երևույթների բացահայտման և կանխարգելման համար:

2025թ դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունները հաստատված են հրապարակման համար 2026թ ապրիլի 29-ին:

Ն. Հարությունյան
Գլխավոր տնօրեն



Ն. Գրիգորյան
Գլխավոր հաշվապահ



2026թ ապրիլի 29

Երևան, Հայաստանի Հանրապետություն



ԱՆԿԱՆ ԱՌԻԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

Ներկայացվում է «ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» Փակ Բաժնետիրական Ընկերության Ղեկավարությանը

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ (այսուհետ՝ Ընկերություն) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ առ 31 դեկտեմբերի 2025թ., ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա համար շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին, սեփական կապիտալում փոփոխությունների մասին, դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, և ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփը:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով տալիս են Ընկերության 2025 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքի, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն ֆինանսական հաշվետվությունների Միջազգային Ստանդարտի (ՖՀՄՍ):

Կարծիքի հիմք

Աուդիտին անցկացրել ենք Աուդիտի Միջազգային Ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության *Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար* բաժնում: Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի Միջազգային Ստանդարտների Խորհրդի կողմից հրապարակված Պրոֆեսիոնալ հաշվապահների էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀԷՄՍԽ կանոնների և Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական հաշվետվությունների աուդիտին վերաբերող էթիկայի պահանջների:

Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Այլ հանգամանք

Ընկերության 2024թ. ֆինանսական հաշվետվությունները աուդիտի են ենթարկվել այլ աուդիտորի կողմից, որը ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ 2025թ. ապրիլի 16-ին արտահայտել է չձևափոխված կարծիք:

Ղեկավարության և կառավարման լիազոր անձանց պատասխանատվությունը

Ղեկավարությունը պատասխանատվություն է կրում ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար, որոնք տալիս են ճշմարիտ և իրական պատկեր, և այնպիսի

ներքին հսկողության համար, որը, ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Հնկերության անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Հնկերությունը լուծարելու կամ Հնկերության գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման լիազոր անձինք պատասխանատու են ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՄ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՄ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- բացահայտում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավականաչափ և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում:
- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Հնկերության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը:
- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Հնկերության անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը:

Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Հնկերությանը դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:

- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները՝ ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների և դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման լիազոր անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

«Աուդիտ Արմենիա» ՓԲԸ

29 ապրիլի, 2026թ.

Ք. Երևան

Աննա Ավետիսյան

Տնօրեն-Բաժնետեր

Աուդիտի ղեկավար



Հազար դրամ	Ծանոթ.	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ակտիվներ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	3	148,021	179,662
Ոչ նյութական ակտիվներ	4	321,471	407,618
Օգտագործման իրավունքի գծով ակտիվներ	5	48,398	65,998
Այլ ոչ ընթացիկ ակտիվներ	6	2,723	3,268
		520,613	656,546
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ		5,108	6,100
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	7	75,549	74,855
Բանկային ավանդներ	8	170,583	52,211
Դրամական միջոցներ	8	99,921	161,205
Այլ ընթացիկ ակտիվներ	9	19,557	16,619
		370,718	310,990
Ընդամենը ակտիվներ		891,331	967,536
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ			
Կապիտալ և պահուստներ			
Կանոնադրական կապիտալ	10	304,620	304,620
Պահուստային կապիտալ		11,955	7,579
Կուտակված շահույթ		82,406	66,748
		398,981	378,947
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Հետաձգված հարկային պարտավորություն	11	8,005	10,683
Վարձակալության գծով պարտավորություն	5	32,458	57,210
Ակտիվներին վերաբերող շնորհներ	12	365,488	453,289
		405,951	521,182
Ընթացիկ պարտավորություններ			
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	13	50,829	43,190
Վարձակալության գծով պարտավորություն	5	21,072	12,562
Շահութահարկի գծով պարտավորություն		5,395	3,775
Ընթացիկ պահուստներ	14	9,103	7,880
		86,399	67,407
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		891,331	967,536

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել և ստորագրվել են Ընկերության ղեկավարության
կողմից 2026թ. ապրիլի 29-ին՝

Գլխավոր տնօրենի
Նորայր Հարությունյան



Գլխավոր հաշվապահ
Նարեկ Գրիգորյան



Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

«ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ
 ՇԱՀՈՒՅԹԻ ԿԱՄ ՎՆԱՍԻ ԵՎ ԱՅԼ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ
 ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
 2025Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ

Հազար դրամ	Ծանոթ.	2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա
Հասույթ	15	599,933	616,442
Վաճառքի ինքնարժեք	16	(522,075)	(519,423)
Համախառն շահույթ		77,858	97,019
Վարչական ծախսեր	17	(128,220)	(123,422)
Այլ եկամուտ		382	230
Շնորհից եկամուտ	12	87,801	87,737
Այլ ծախսեր	18	(8,032)	(8,844)
Գործառնական գործունեությունից շահույթ/վնաս		29,789	52,720
Ֆինանսական եկամուտ, զուտ	19	7,101	2,698
Այլ ֆինանսական հոդվածներ		(2)	(1)
Շահույթ մինչև հարկերը		36,888	55,417
Շահութահարկի գծով ծախս	20	(7,333)	(11,654)
Տարվա շահույթ		29,555	43,763
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ		-	-
Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ հարկումից հետո		-	-
Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունքներ		29,555	43,763

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

Հազար դրամ	Կանոնադրական կապիտալ	Պահուստային կապիտալ	Զբաղիված շահույթ	Ընդամենը
2024թ հունվարի 1-ի դրությամբ	304,620	7,564	34,163	346,347
Տարվա շահույթ	-	-	43,763	43,763
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	43,763	43,763
Պահուստային կապիտալի համալրում	-	15	(15)	-
Շահաբաժիններ	-	-	(11,163)	(11,163)
2024թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	304,620	7,579	66,748	378,947
Տարվա շահույթ	-	-	29,555	29,555
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	29,555	29,555
Պահուստային կապիտալի համալրում	-	4,376	(4,376)	-
Շահաբաժիններ	-	-	(9,521)	(9,521)
2025թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	304,620	11,955	82,406	398,981

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
<i>Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր</i>		
Հաճախորդներից ստացված մուտքեր	718,817	726,334
Այլ մուտքեր	184	66
Վճարումներ աշխատակիցներին և նրանց անունից	(366,051)	(372,982)
Վճարումներ մատակարարներին և նրանց անունից	(155,282)	(161,916)
Վճարված հարկեր, տուրքեր և այլ պարտադիր վճարներ՝ բացի շահութահարկից	(100,362)	(98,995)
Վճարված շահութահարկ	(4,500)	-
Վճարումներ գործուղումների համար	(6,643)	(4,223)
Այլ վճարումներ	-	-
Գործառնական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ	86,163	88,284
<i>Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր</i>		
Բանկային ավանդների գծով մուտքեր	54,670	108,718
Բանկային ավանդների գծով ելքեր	(160,000)	(50,000)
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վաճառքից մուտք	302	273
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռք բերումների գծով վճարներ	(6,280)	(6,414)
Ներդրումային գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ	(111,308)	52,577
<i>Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր</i>		
Վարձակալության գծով պարտավորության մարումից ելքեր	(20,678)	(19,180)
Վարձակալության գծով տոկոսների վճարումից ելքեր	(5,940)	(7,438)
Շահաբաժինների վճարումից ելքեր	(9,521)	(11,163)
Ֆինանսական գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ	(36,139)	(37,781)
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ	(61,284)	103,080
Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների վրա	-	-
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի սկզբում	161,205	58,125
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարվա վերջում	99,921	161,205

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

1 Գործառնությունների բնույթը և ընդհանուր տեղեկատվություն

«Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ-ն (այսուհետ՝ Ընկերություն) ստեղծվել է ՀՀ կառավարության 2002 թվականի հոկտեմբերի 10-ի թիվ 1663-Ա որոշման հիման վրա և գրանցվել է ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից 2002 թվականի հոկտեմբերի 31-ին:

Ընկերությունն իրավաբանական անձ համարվող, շահույթ ստանալու նպատակ հետապնդող (առևտրային) կազմակերպություն է, որը ստեղծվել է և իր գործունեության ընթացքում ղեկավարվում է ՀՀ Սահմանադրությամբ, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքին, «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքին, «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքին, «Հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների մասին» ՀՀ օրենքին, ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի որոշումներին, գործող այլ իրավական ակտերին և իր կանոնադրությամբ համապատասխան:

Ընկերության

Անվանումը՝

«Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ

Գրանցման համարը՝

273.120.03313

Գրանցման վկայականը՝

03Ա 056014

Գրանցման ամսաթիվը՝

31.10.2002թ.

Գտնվելու վայրը՝

ՀՀ, ք. Երևան, Աբովյան փող. 27

Հարկ վճարողի հաշվառման համարը՝

01544167

Ընկերության ստեղծման հիմնական նպատակը էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայում էլեկտրական էներգիայի և հզորության հաշվառման և ֆինանսական հաշվարկների իրականացումն է:

Ընկերության աշխատակիցների ցուցակային թվաքանակն առ 31.12.2025թ. կազմել է 70 հոգի (31.12.2024թ.՝ 71 հոգի):

Գորպորատիվ կառուցվածքը

Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 304,620,000 (երեք հարյուր չորս միլիոն վեց հարյուր քսան հազար) ՀՀ դրամ: Ընկերության կանոնադրական կապիտալի բոլոր բաժնետոմսերը տեղաբաշխված են և լրիվ վճարված:

Ընկերության միակ բաժնետերը Հայաստանի Հանրապետությունն է, որի անունից բաժնետոմսերի կառավարումն իրականացվում է ՀՀ կառավարության լիազորած մարմնի՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից:

Ընկերության կառավարման բարձրագույն մարմինն Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովն է, որն ունի Ընկերության կառավարման և գործունեության ցանկացած հարցի վերջնական լուծման իրավունք:

Ընկերության գործունեության ընդհանուր ղեկավարումը, բացառությամբ այն հարցերի, որոնք կանոնադրությամբ կամ օրենքով վերապահված են Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի կամ գլխավոր տնօրենի իրավասությանը, իրականացնում է Ընկերության խորհուրդը՝ հետևյալ կազմով.

Լիանա Հովհաննիսյան

Խորհրդի նախագահ

Վարդան Ենգիզունյան

Խորհրդի անդամ

Ռոմիկ Ավոյան

Խորհրդի անդամ

Երանուհի Ագոյան

Խորհրդի անդամ

Նորայր Հարությունյան

Խորհրդի անդամ

Ընկերության ընթացիկ գործունեության կառավարման բոլոր հարցերը պատկանում են Ընկերության գլխավոր տնօրենի իրավասությանը, բացառությամբ Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի և

խորհրդի բացառիկ իրավասություն հանդիսացող հարցերի: Գլխավոր տնօրենի հաստիքում հիմնական նշանակում կատարված չլինելու դեպքում այդ գործառույթն իրականացնում է Ընկերության գլխավոր տնօրենի պարտականությունները կատարողը:

«Պատրաստման հիմքերը

1.1 Համապատասխանություն

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտներին (ՖՀՄՍ) համաձայն, ինչպես հրապարակվել է Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտների Խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից:

1.2 Ճանաչման հիմքեր

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի սկզբունքով, բացառությամբ որոշ ֆինանսական գործիքների, որոնք ներկայացված են ապագա դրամական հոսքերի ներկա գեղչված արժեքով:

1.3 Գործառնական և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը հայկական դրամն է (դրամ), որն էլ հանդիսանում է Ընկերության գործառնական արժույթը, քանի որ այն լավագույնս արտացոլում է ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Ընկերության գործարքների տնտեսական բովանդակությունը:

Սույն ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հայկական դրամով, քանի որ դեկլարության համոզմամբ այս արժույթն առավել օգտակար է Ընկերության ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների համար: Դրամով ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է մինչև մոտակա հազար միավորը:

1.4 Գնահատումների և դատողությունների կիրառում

ՖՀՄՍ-ին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որպեսզի Ընկերության ղեկավարությունը կարևոր գնահատումներ և ենթադրություններ կատարի, որոնք ազդեցություն են գործում ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների գումարների, ինչպես նաև հաշվետու տարվա եկամուտների և ծախսերի գումարների վրա:

Նշանակալի ոլորտները, որոնք ներառում են ավելի բարձր աստիճանի դատողություն, որտեղ ենթադրություններն ու գնահատումները կարևոր են ֆինանսական հաշվետվությունների համար, բացահայտվում են ֆինանսական հաշվետվությունների կից ծանոթագրություններում:

1.5 Նոր և վերանայված ՖՀՄՍ ստանդարտներ

Նոր և վերանայված ստանդարտներ և մեկնաբանություններ, որոնք կիրառելի են հաշվետու ժամանակաշրջանում և դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար
Հաշվետու ժամանակաշրջանում կիրառվել են հետևյալ նոր և վերանայված ստանդարտները և փոփոխությունները.

ՀՀՄՍ 1 «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում» (փոփոխություններ)

Փոփոխությունները վերաբերում են պարտավորությունների դասակարգմանը որպես ընթացիկ կամ ոչ ընթացիկ: Պարտավորությունների դասակարգումը կախված է հաշվետու օրվա դրությամբ առկա իրավունքներից: Էական ազդեցություն չի ունեցել:

ՀՄՍ 1 և ՖՀՄՍ Գործնական ուղեցույց 2 (փոփոխություններ)

Բացահայտումների պահանջների պարզեցում՝ հաշվապահական քաղաքականությունների վերաբերյալ: Ընկերությունը ներկայացնում է էական քաղաքականությունները: Էական ազդեցություն չի ունեցել:

ՀՄՍ 8 «Հաշվապահական քաղաքականություններ, գնահատումներ և սխալներ» (փոփոխություններ)
Ներմուծվել է «հաշվապահական գնահատումների» հստակ սահմանում: Էական ազդեցություն չի ունեցել:

ՀՄՍ 12 «Շահութահարկ» (փոփոխություններ)

Կապված են հետաձգված հարկի ճանաչման հետ որոշ գործարքների դեպքում: Էական ազդեցություն չի ունեցել:

ՀՄՍ 16 «Վարձակալություններ» (փոփոխություններ)

Վարձակալության պարտավորությունների հետ կապված փոփոխություններ: Ընկերության վրա էական ազդեցություն չի ունեցել:

ՀՄՍ 7 և ՀՄՍ 9 (փոփոխություններ)

Ֆինանսական գործիքների բացահայտումների և դասակարգման որոշ ճշգրտումներ: Էական ազդեցություն չի ունեցել:

Ընկերությունը գնահատել է նաև դեռևս չկիրառված ստանդարտների ազդեցությունը և եկել է եզրակացության, որ դրանց կիրառումը չի հանգեցնի էական փոփոխությունների ֆինանսական հաշվետվություններում:

2 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

2.1 Արտարժույթ

Արտարժույթով գործարքներ

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս Ընկերության համար գործառնական արժույթից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական Բանկի (ՀՀ ԿԲ) կողմից հրապարակված միջին փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները պետք է վերահաշվարկվեն՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ կողմից հրապարակված միջին փոխարժեքը: Իրական արժեքով հաշվառվող և արտարժույթով սահմանված ոչ դրամային հոդվածները վերահաշվարկվում են գործարքի օրվա դրությամբ գործող միջին փոխարժեքով: Ոչ դրամային հոդվածները, որոնց սկզբնական արժեքը հաշվառվում է արտարժույթով, չեն վերահաշվարկվում: Ստորև ներկայացված են ՀՀ Կենտրոնական Բանկի կողմից հրապարակված միջին փոխարժեքները.

	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ռուբլի	4.87	3.71
ԱՄՆ դոլար	381.36	396.56
Մեծ Բրիտանական ֆունտ	514.86	499.27
Եվրո	449.01	413.89

Արտարժույթով գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են ժամանակաշրջանի շահույթում կամ վնասում:

2.2 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ձեռքբերման գինը, ներկրման տուրքերը, հարկերը, որոնք ենթակա չեն վերադարձման և ուղղակիորեն վերագրվող ծախսումներ: Հիմնական միջոցների օտարման կամ դուրսգրման հետևանքով առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է վաճառքից հասույթի և ակտիվի հաշվեկշռային արժեքի տարբերությամբ և ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Հիմնական միջոցների՝ որպես առանձին ակտիվ հաշվառվող միավորի բաղկացուցչի փոխարինման ծախսումները կապիտալացվում են դուրս գրված բաղկացուցչի հաշվեկշռային արժեքի հետ: Այլ հետագա ծախսումները կապիտալացվում են միայն այն ժամանակ, երբ դրանք ավելացնում են հիմնական միջոցի միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները: Բոլոր այլ ծախսումները, ներառյալ պահպանման և վերանորոգման ծախսումները, ճանաչվում են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կատարվելու ժամանակաշրջանում:

Մաշվածությունը ճանաչվում է շահույթի կամ վնասի և այլ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է այն պահից, երբ ակտիվը դառնում է մատչելի՝ իր նպատակային նշանակությամբ օգտագործելու համար: Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

Մեքենաներ և սարքավորումներ	5-18 տարի
Տրանսպորտային միջոցներ	5-16 տարի
Արտադրատնտեսական գույք	5-10 տարի
Սերվերներ	4-20 տարի
Այլ համակարգչային տեխնիկա	4-6 տարի

2.3 Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվը ճանաչվում է այն և միայն այն դեպքերում, երբ հավանական է, որ ակտիվին վերագրելի ակնկալվող ապագա տնտեսական օգուտները կհոսեն ընկերության, և ակտիվի արժեքը կարող է արժանահավատորեն չափվել:

Ոչ նյութական ակտիվները, որոնք ձեռք են բերվել Հնկերության կողմից և ունեն օգտակար ծառայության որոշակի ժամկետ, ներկայացված են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:

Անորոշ օգտակար ծառայությամբ ոչ նյութական ակտիվները չեն ամորտիզացվում, դրանք չափվում են ինքնարժեքով՝ հանած կուտակված արժեզրկումից կորուստները:

Ամորտիզացիան ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ կիրառելով հաշվարկի գծային մեթոդը ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում: Ոչ նյութական ակտիվների գնահատված օգտակար ծառայության ժամկետները (որոնք սովորաբար հիմնված են պայմանագրային իրավունքների ժամկետների վրա) ներկայացված են ստորև:

Համակարգչային ծրագրեր	- 4-15 տարի
Լիցենզիաներ և արտոնագրեր	- 2-15 տարի

2.4 Հիմնական միջոցների արժեզրկում

Մաշվող ակտիվները արժեզրկման համար վերանայվում են, երբ իրադարձությունները և հանգամանքների փոփոխությունները վկայում են այն մասին, որ դրանց հաշվեկշռային արժեքը կարող է չվերականգնվել: Արժեզրկման կորուստը ճանաչվում է այն գումարով, որով ակտիվի հաշվեկշռային արժեքը գերազանցում է փոխհատուցվող գումարը:

Փոխհատուցվող գումարը վաճառքի գուտ գնից և օգտագործման արժեքից առավելագույնն է: Եթե ակտիվի կամ դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարն ավելի փոքր է նրա հաշվեկշռային արժեքից, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև փոխհատուցվող գումարը:

Երբ հետագայում արժեզրկումից կորուստը հակադարձվում է, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը պետք է ավելացվի մինչև նրա փոխհատուցվող գումարը, բայց այնպես, որ ակտիվի ավելացված հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլինի, եթե նախորդ տարիներին այդ ակտիվի կամ դրամաստեղծ միավորի գծով արժեզրկումից կորուստներ

ճանաչված չլինեն: Արժեզրկումից կորստի հակադարձումն անմիջապես ճանաչվում է որպես եկամուտ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, բացառությամբ այն դեպքերի, երբ համապատասխան ակտիվը հաշվառվում է վերագնահատված արժեքով, որի դեպքում արժեզրկումից կորստի ցանկացած հակադարձում դիտվում է որպես վերագնահատումից արժեքի աճ:

2.5 Պաշարներ

Պաշարները հաշվառվում են ինքնարժեքից և իրացման գուտ արժեքից նվազագույնով: Իրացման գուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի ձևավորվող գինն է՝ հանած համալրման և վաճառքը կազմակերպելու համար անհրաժեշտ ծախսումները: Պաշարների ինքնարժեքը ներառում է պաշարների ձեռքբերման, ինչպես նաև դրանք իրենց ներկայիս վիճակին և գտնվելու վայր հասցնելու ծախսերը:

2.6 Շնորհներ

Շնորհները, ներառյալ ոչ դրամային շնորհները՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացվում են իրական արժեքով որպես հետաձգված եկամուտ:

Շնորհը ճանաչվում է որպես եկամուտ՝ սխտեմատիկ եւ ռացիոնալ հիմունքով, ակտիվի օգտակար ծառայության ընթացքում:

Ոչ ընթացիկ ակտիվների ձեռքբերմանը վերաբերող շնորհները ներառվում են ոչ ընթացիկ պարտավորություններում եւ ճանաչվում են որպես եկամուտ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում գծային մեթոդով՝ համապատասխան ակտիվի օգտակար ծառայության ընթացքում:

2.7 Շահութահարկ

Ընթացիկ շահութահարկը տարվա համար հարկվող շահույթից վճարվելիք հարկն է՝ հաշվետու ամսաթվին գործող կամ, ըստ էության գործող հարկային դրույքաչափերով: Ընթացիկ և հետաձգված հարկերը ճանաչվում են շահույթում կամ վնասում, բացառությամբ այն դեպքերի, երբ հարկը վերաբերում է ձեռնարկատիրական գործունեության միավորմանը կամ էլ այնպիսի հոդվածի, որը ճանաչված է ուղղակիորեն սեփական կապիտալում:

2.8 Հաճախորդների հետ կնքված պայմանագրերից հասույթ

ՖՀՄՍ 15 «Հաճախորդների հետ կնքված պայմանագրերից հասույթ» ստանդարտի էական սկզբունքն այն է, որ Ընկերությունը պետք է հասույթը ճանաչի այն գումարով, որով որ Ընկերությունը պատկերացնում կամ ակնկալում է, որ հաճախորդներին, ըստ պայմանագրի, տրված ապրանքների կամ մատուցված ծառայությունների գումարները կստացվեն կամ կհավաքագրվեն Ընկերության կողմից:

Ստանդարտը տալիս է պարզ, սկզբունքների վրա հիմնված հինգ քայլ պարունակող մոդել, որը կիրառվելու է հաճախորդների հետ բոլոր պայմանագրերի հաշվառման նպատակով:

Ստանդարտի հիմնական սկզբունքը ներկայացված է հինգ քայլ ներառող մոդելում՝

Քայլ 1. ճանաչել հաճախորդի հետ կնքված պայմանագիրը.

Քայլ 2. ճանաչել պայմանագրային պարտավորությունները.

Քայլ 3. սահմանել գործարքի գինը.

Քայլ 4. կիրառել գործարքի գինը պայմանագրային պարտավորությունների նկատմամբ.

Քայլ 5. ճանաչել հասույթը, երբ Ընկերությունը ավարտում է պայմանագրային պարտավորությունները:

2.9 Աշխատակիցներին հատուցումներ

Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումները ներառում են աշխատավարձերը, կարճաժամկետ փոխհատուցելի բացակայությունները (ինչպիսիք են, օրինակ, վճարովի տարեկան արձակուրդները և հիվանդության հետ կապված վճարովի արձակուրդները) և պարգևավճարները:

2.10 Ֆինանսական գործիքներ

Ճանաչում և ապաճանաչում

Ֆինանսական ակտիվները կամ ֆինանսական պարտավորությունները ճանաչվում են, երբ Ընկերությունը դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվները ապաճանաչվում են, երբ ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները լրանում են, կամ երբ ֆինանսական ակտիվները և բոլոր նշանակալի ռիսկերը և հատուցումները փոխանցվում են:

Ֆինանսական պարտավորությունները ապաճանաչվում են, երբ դրանք մարվում են, ենթակա չեն վճարման, չեղյալ են ճանաչվել կամ լրացել է դրանց ուժի մեջ լինելու ժամկետը:

Ֆինանսական ակտիվների դասակարգում և սկզբնական չափում

Ֆինանսական ակտիվները բաժանվում են հետևյալ կատեգորիաների.

- ֆինանսական ակտիվներ՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով,
- վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ,
- փոխառություններ և դեբիտորական պարտքեր:

Ֆինանսական ակտիվները սկզբնական ճանաչման ժամանակ վերագրվում են տարբեր կատեգորիաների՝ կախված գործիքի բնույթից և նպատակից: Ֆինանսական գործիքի կատեգորիան համապատասխանեցվում է այն սկզբունքին, որով չափվում է տվյալ գործիքը և այն հանգամանքին, թե արդյոք առաջացող եկամուտը և ծախսերը ճանաչվում են շահույթում կամ վնասում, թե ուղղակիորեն այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում:

Ֆինանսական ակտիվների հետ կապված բոլոր ծախսերը և եկամուտները որոնք ճանաչվում են շահույթում կամ վնասում, ներկայացվում են "Ֆինանսական ծախս", "Ֆինանսական եկամուտ" կամ "Այլ ֆինանսական արդյունքներ" հոդվածներում, բացառությամբ առևտրային դեբիտորական պարտքերի արժեզրկման, որը ներկայացվում է "Այլ ծախսեր" հոդվածում:

I. Ֆինանսական ակտիվներ՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով

Ֆինանսական ակտիվները՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով, ներառում են առևտրային նպատակով պահվող ֆինանսական ակտիվները կամ այն ֆինանսական ակտիվները, որոնք որպես չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով դասակարգվել են Ընկերության կողմից սկզբնական ճանաչման ժամանակ: Բոլոր ածանցյալ ֆինանսական գործիքները, որոնք ենթակա չեն հեջավորման, դասակարգվում են այս կատեգորիայում:

Ածանցյալ ֆինանսական գործիքների գծով առաջացած ցանկացած օգուտ կամ վնաս հիմնված է իրական արժեքի փոփոխության վրա, որը որոշվում է՝ ուղղակիորեն վկայակոչելով գործող շուկայում գործարքները կամ գործող շուկայի բացակայության դեպքում՝ գնահատման մեթոդի միջոցով:

II. Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ

Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվները չափվում են իրական արժեքով՝ իրական արժեքի փոփոխությունները ուղղակիորեն ճանաչելով այլ համապարփակ արդյունքներում: Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների կատեգորիայում դասակարգված ֆինանսական գործիքներից առաջացած օգուտը կամ վնասը ճանաչվում է շահույթում կամ վնասում այն դեպքում, երբ նշված ակտիվները վաճառվում են կամ երբ ներդրումն արժեզրկվում է: Արժեզրկման դեպքում ցանկացած վնաս, որը նախկինում ճանաչվել էր այլ համապարփակ արդյունքներում, փոխանցվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն: Սեփական կապիտալի գործիքներից առաջացած և համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչված վնասները չեն հակադարձվում համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, այլ ճանաչվում են սեփական կապիտալում: Նախորդ ժամանակաշրջանի համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչված պարտքային արժեթղթերի արժեզրկումից առաջացած վնասները հակադարձվում են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին

հաշվետվությունում, եթե հետագա աճը հիմնվում է այն դեպքի վրա, որը տեղի է ունեցել համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ արժեզրկումից վնասի ճանաչումից հետո:

III. Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

Ընթացիկ դեբիտորական պարտքերը սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով: Հետագայում դրանք հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ հանած արժեզրկման պահուստը: Առևտրային դեբիտորական պարտքերի արժեզրկման պահուստը ստեղծվում է այն ժամանակ, երբ առկա է օբյեկտիվ ապացույց, որ Ընկերությունը սկզբնապես սահմանված ժամկետներում չի կարող հավաքագրել վերադարձման ենթակա բոլոր գումարները: Դեբիտորի զգալի ֆինանսական դժվարությունները, վճարման հետաձգումը և վճարումների ուշացումները ցուցանիշ են այն բանի, որ առևտրային դեբիտորական պարտքն արժեզրկված է: Պահուստի գումարը ակտիվի հաշվեկշռային արժեքի և սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով զեղչված ապագա դրամական հոսքերի ներկա արժեքի տարբերությունն է:

Պահուստի մնացորդը ճշգրտվում է հաշվետու ժամանակաշրջանի համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ ծախսի կամ եկամտի ճանաչման միջոցով: Հաճախորդի հաշվի մնացորդից դուրս գրվող ցանկացած գումար նվազեցվում է առկա կասկածելի դեբիտորական պարտքի պահուստից: Բոլոր դեբիտորական պարտքերը, որոնց հավաքագրումը գնահատվում է անհավանական, դուրս են գրվում:

IV. Մնացորդներ դրամարկդում և բանկերում

Մնացորդները դրամարկդում և բանկերում ներառում են բանկային հաշիվների մնացորդները և ավանդները:

Ֆինանսական ակտիվների արժեզրկում

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ ֆինանսական ակտիվները, բացառությամբ այն ֆինանսական ակտիվների՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով, գնահատվում են արժեզրկման հայտանիշի առկայության համար: Ֆինանսական ակտիվներն արժեզրկված են, եթե առկա է անկողմնակալ վկայություն, որ ֆինանսական ակտիվների սկզբնական ճանաչումից հետո տեղի ունեցած մեկ կամ մի քանի իրադարձություններ ազդել են ակնկալվող դրամական միջոցների հոսքերի վրա:

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների գծով արժեզրկման կորուստը հաշվառվում է ակտիվի հաշվեկշռային արժեքի և սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով զեղչված դրամական միջոցների ակնկալվող ապագա հոսքերի ներկա արժեքի միջև տարբերությամբ: Բոլոր ֆինանսական ակտիվների համար արժեզրկումից կորուստն ուղղակիորեն նվազեցվում է ֆինանսական ակտիվի հաշվեկշռային արժեքից, բացառությամբ առևտրային դեբիտորական պարտքերի, որոնց հաշվեկշռային արժեքը նվազեցվում է կասկածելի պարտքի պահուստի միջոցով:

Բացառությամբ վաճառքի համար մատչելի սեփական կապիտալի գործիքների, եթե հետագա ժամանակաշրջանում արժեզրկման կորուստը նվազում է և նվազումը օբյեկտիվորեն կարելի է վերագրել արժեքի իջեցումից հետո տեղի ունեցած դեպքերին, ապա նախկինում ճանաչված արժեզրկման կորուստը հակադարձվում է՝ ճանաչվելով համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում այն չափով, որ հակադարձումը չհանգեցնի ֆինանսական ակտիվի այնպիսի հաշվեկշռային արժեքի, որը գերազանցի այն ամորտիզացված արժեքը, որը կլինի, եթե այդ ֆինանսական ակտիվի արժեքի իջեցման հակադարձման ամսաթվի դրությամբ արժեզրկում ճանաչված չլիներ:

Ֆինանսական պարտավորությունների դասակարգում և սկզբնական չափում

Ընկերության ֆինանսական պարտավորությունները ներառում են վարձակալության գծով պարտավորությունները, առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը:

I. Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը ճանաչվում են իրական արժեքով, հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով:

3 Հիմնական միջոցներ

հազար դրամ	Մեքենաներ և սարքավորումներ	Տրանսպորտային միջոցներ	Արտադրատնտեսական գույք	Մերվերներ և այլ համակարգչային տեխնիկա	Օգտագործման համար ոչ մատչելի հիմնական միջոցներ	Ընդամենը
Սկզբնական արժեք						
2024թ. հունվարի 1-ի դրությամբ	57,464	48,160	26,080	294,316	769	426,789
Ավելացում, կապիտալացում	-	2,563	1529	2,613	-	6,705
Օտարում	(99)	-	-	-	(99)	(198)
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	57,365	50,723	27,609	296,929	670	433,296
Ավելացում, կապիտալացում	2,265	-	1207	2,095	-	5,567
Օտարում, դուրսգրում	(148)	-	-	-	(99)	(247)
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	59,482	50,723	28,816	299,024	571	438,616
Կուտակված մաշվածություն						
2024թ. հունվարի 1-ի դրությամբ	40,122	31,255	14928	130,192	-	216,497
Տարվա ծախս	2,910	3954	2357	27,943	-	37,164
Օտարում	(27)	-	-	-	-	(27)
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	43,005	35,209	17,285	158,135	-	253,634
Տարվա ծախս	3,280	4082	2455	27,204	-	37,021
Օտարում	(60)	-	-	-	-	(60)
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	46,225	39,291	19,740	185,339	-	290,595
Հաշվեկշռային արժեք						
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	14,360	15,514	10,324	138,794	670	179,662
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	13,257	11,432	9,076	113,685	571	148,021

հազար դրամ	Համակարգչային ծրագրեր	Լիցենզիաներ	Ընդամենը
Սկզբնական արժեք			
2024թ. հունվարի 1-ի դրությամբ	709,498	68,942	778,440
Ավելացում, կապիտալացում	-	5,000	5,000
Օտարում	-	-	-
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	709,498	73,942	783,440
Ավելացում, կապիտալացում	-	5,000	5,000
Օտարում, դուրսգրում	-	(10,000)	(10,000)
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	709,498	68,942	778,440
Կուտակված մաշվածություն			
2024թ. հունվարի 1-ի դրությամբ	234,855	49,184	284,039
Տարվա ծախս	82,402	9,381	91,783
Օտարում, դուրսգրում	-	-	-
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	317,257	58,565	375,822
Տարվա ծախս	82,146	9,001	91,146
Օտարում, դուրսգրում	-	(10,000)	(10,000)
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	399,403	57,566	456,969
Հաշվեկշռային արժեք			
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	392,241	15,377	407,618
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	310,095	11,376	321,471

5 Օգտագործման իրավունքի գծով ակտիվներ

2023թ. հոկտեմբերի 10-ին ամբողջ վարձակալած տարածքի համար «Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ-ի և «ԷԷՀՕ» ՓԲԸ-ի միջև կնքվել է մեկ միասնական պայմանագիր՝ 5 տարի գործողության ժամկետով:

Վարձակալության հաշվեկշռային արժեքները ներկայացված են ստորև՝

հազար դրամ	31.12.2025	31.12.2024
Սկզբնական արժեք	87,997	87,997
Մաշվածություն	(39,599)	(21,999)
Հաշվեկշռային արժեք	48,398	65,998
Հաշվեկշռային արժեք հունվարի 1-ին	65,998	83,597
Ավելացում տարվա ընթացքում	-	-
Մաշվածության ավելացում	(17,600)	(17,599)
Հաշվեկշռային արժեք դեկտեմբերի 31-ին	48,398	65,998

Վարձակալությանը վերաբերող՝ շահույթում կամ վնասում ճանաչված գումարներ՝

Վարձակալությանը վերաբերող ընդհանուր դրամական արտահոսքեր՝

Հազար դրամ	2025թ.	2024թ.
Վարձակալական պարտավորության գծով տոկոսային ծախս (ներառված է ֆինանսական ծախսերում)	(5,940)	(7,438)
Տարվա մաշվածություն (ներառված է վաճառքի ինքնարժեքում և վարչական ծախսերում)	(17,600)	(17,599)
	(23,540)	(25,037)

Հազար դրամ	2025թ.	2024թ.
Վարձակալությանը վերաբերող ընդհանուր դրամական արտահոսքերը (ԱԱՀ ներառյալ)	26,618	26,618

Վարձակալության գծով պարտավորություններն ըստ մարման ժամկետների՝

Հազար դրամ	Վարձակալության գծով պարտավորություններ (առանց ԱԱՀ)		Վարձակալության գծով պարտավորությունների ներկա արժեք (առանց ԱԱՀ)	
	31.12.2025թ.	31.12.2024թ.	31.12.2025թ.	31.12.2024թ.
Մինչև 1 տարի	22,181	22,181	21,072	12,562
1-ից 5 տարի	38,817	60,999	32,458	57,210
Ընդամենը	60,998	83,180	53,530	69,772
Հանած դեռ չկրած ֆինանսական ծախսեր	(7,468)	(13,408)	-	-
Ընդամենը	53,530	69,772	-	-

Վարձակալության գծով պարտավորություններ՝ ներառված ֆինանսական վիճակի մասին հաշվետվության մեջ

Հազար դրամ	31.12.2025թ.	31.12.2024թ.
Վարձակալության գծով պարտավորությունների ընթացիկ մաս	21,072	12,562
Վարձակալության գծով պարտավորությունների ոչ ընթացիկ մաս	32,458	57,210
Ընդամենը	53,530	69,772

Վարձակալության գծով պարտավորությունների գեղջման նպատակով կիրառված վարձակալի լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը 10% է:

Այս հոդվածում ներկայացված են Հնկերության կողմից վարձակալված շենքային տարածքի վրա կատարված կապիտալ ծախսումները, որոնք ամորտիզացվում են 20 տարի ժամկետով:

Հազար դրամ	31.12.2025թ.	31.12.2024թ.
Վարձակալված շենքային տարածքի վրա կատարված կապիտալ ծախսումների սկզբնական արժեք	9,264	9,264
Մաշվածություն	(6,541)	(5,996)
Հաշվեկշռային արժեք	2,723	3,268

7 Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

Այս հոդվածում ներկայացված են մատուցված ծառայությունների գծով առկա դեբիտորական պարտքերը: Պարտքային ռիսկի շարունակական գնահատումը կատարվում է դեբիտորների ֆինանսական վիճակի հիման վրա, և համապատասխան դեպքերում ստեղծվում է հնարավոր պարտքային կորուստների գծով պահուստ:

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Դեբիտորական պարտքեր մատուցված ծառայությունների գծով	74,667	73,675
Առևտրային դեբիտորական պարտքի արժեզրկման կորուստ	-	-
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	74,667	73,675
Տրված ընթացիկ կանխավճարներ	9	6
Այլ դեբիտորական պարտքեր	873	1,174
Ընդամենը ընթացիկ առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	75,549	74,855

Պարտքային ռիսկի շարունակական գնահատումը կատարվում է դեբիտորների ֆինանսական վիճակի հիման վրա, և համապատասխան դեպքերում ստեղծվում է հնարավոր պարտքային կորուստների գծով պահուստ: Հնկերության դեբիտորական պարտքերի առավել նշանակալի մասը վերաբերում է «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ից ստացվելիք գումարներին, որոնք սովորաբար մարվում են մեկ ամսվա ընթացքում: Դեբիտորական պարտքի ապահովման միջոց են հանդիսանում բանկում «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի անվամբ բացված հատուկ հաշվում մուտքագրվող դրամական միջոցները՝ որպես գրավի առարկա, ինչպես նաև Հնկերության ստացած բանկային երաշխիքն իր կողմից մատուցվող ծառայությունների ամբողջ ծավալով՝ ի ապահովում «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կողմից ստացված ծառայությունների դիմաց վճարման ենթակա գումարների:

8 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Բանկային հաշիվներ (դրամային)	99,921	161,205
Բանկային հաշիվներ (արտարժույթային)	-	-
	99,921	161,205

Դրամական միջոցներն արտահայտված են ՀՀ դրամով:

Բանկային ավանդներ

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ընկերության բանկային ավանդների մնացորդը «Արդշին» բանկում կազմում է 80,000 հազ. դրամ, հաշվեգրած տոկոսային եկամուտի մնացորդը 3,467 հազ. դրամ, իսկ «Կոնվերս» բանկում ավանդների մնացորդը կազմում է 80,000 հազ. դրամ, հաշվեգրած տոկոսային եկամուտի մնացորդը՝ 7,116 հազ.դրամ:

9 Այլ ընթացիկ ակտիվներ

Հազար դրամ	31.12.2025թ.	31.12.2024թ.
Գալիք ժամանակաշրջանին վերաբերող ծրագրային սպասարկման գծով կատարված վճարումներ	18,654	16,471
Այլ	903	148
Ընդամենը	19,557	16,619

10 Մեփական կապիտալ

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Կանոնադրական կապիտալ	304,620	304,620
	304,620	304,620

Ընկերության կանոնադրական կապիտալը բաղկացած է 30,462 հատ 10,000 դրամ անվանական արժեքով հասարակ (սովորական) բաժնետոմսերից: Ընկերության բոլոր բաժնետոմսերը տեղաբաշխված են ու լրիվ վճարված: Բոլոր բաժնետոմսերը պատկանում են Հայաստանի Հանրապետությանը:

11 Հետաձգված հարկեր

Ճանաչված հետաձգված հարկային ակտիվներ/պարտավորություններ

Հազար դրամ	Հետաձգված հարկային ակտիվներ		Հետաձգված հարկային պարտավորություններ		Զուտ հետաձգված հարկ	
	2025թ.	2024թ.	2025թ.	2024թ.	2025թ.	2024թ.
Հիմնական միջոցներ	-	-	(20,415)	(18,502)	(20,415)	(18,502)
Ոչ նյութական ակտիվներ	9,538	5,443	-	-	9,538	5,443
Այլ ոչ ընթացիկ ակտիվներ	310	279	-	-	310	279
Օգտագործման իրավունքի գծով ակտիվներ	-	-	(8,712)	(11,880)	(8,712)	(11,880)
Վարձակալության գծով պարտավորություններ	9,636	12,559	-	-	9,636	12,559

Վաստակած արձակուրդայինի գծով պահուստ	1,638	1,418	-	-	1,638	1,418
Հաջորդ ժամանակաշրջաններ տեղափոխվող հարկային վնաս	-	-	-	-	-	-
	21,122	19,699	(29,127)	(30,382)	(8,005)	(10,683)

Ժամանակավոր տարբերությունների շարժը տարվա ընթացքում

<i>Հազար դրամ</i>	2023թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	Եկամտում ճանաչված	2024թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	Եկամտում ճանաչված	2025թ դեկտեմբերի 31- ի դրությամբ
Հիմնական միջոցներ	(15,362)	(3,140)	(18,502)	(1,913)	(20,415)
Ոչ նյութական ակտիվներ	2,071	3,372	5,443	4,095	9,538
Այլ ոչ ընթացիկ ակտիվներ	248	31	279	31	310
Օգտագործման իրավունքի գծով ակտիվներ	(15,048)	3,168	(11,880)	3,168	(8,712)
Վարձակալության գծով պարտավորություններ	15,213	(2,654)	12,559	(2,923)	9,636
Վաստակած արձակուրդայինի գծով պահուստ	1,358	60	1,418	220	1,638
Հաջորդ ժամանակաշրջաններ տեղափոխվող հարկային վնաս	5,178	(5,178)	-	-	-
	(6,342)	(4,341)	(10,683)	2,678	(8,005)

12 Շնորհներ

2022թ. Ընկերությունը ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության ֆինանսավորմամբ որպես շնորհ ստացել է 586,940 հազար դրամի արժողությամբ «Էլեկտրաէներգետիկական շուկայի ազատականացում և Էլեկտրաէներգիայի առևտուր» շուկայի կառավարման ծրագիրը: 2023թ ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության ֆինանսավորմամբ որպես շնորհ ստացել է 93 567 հազար դրամի հիմնական միջոցներ, 8,977 հազար դրամի ոչ նյութական ակտիվներ, 1,937 հազար դրամի պաշարներ և 5,700 հազար դրամի դիզայն նախագիծ:

2024թ նույն գործակալությունից որպես շնորհ ստացել է 206 հազար դրամի հիմնական միջոցներ:

2025 թ. շնորհներից եկամուտ է ճանաչվել 87,802 հազ. դրամ, որից 87,788 հազ. դրամը հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների մաշվածությունից, իսկ 14 հազ. դրամը՝ որպես շնորհ ստացված պաշարների ծախսագրումից:

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Առևտրային կրեդիտորական պարտքեր	9,210	9,208
Աշխատավարձի գծով պարտքեր	17,609	17,317
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	26,819	26,525
Վճարման ենթակա հարկեր՝ բացի շահութահարկից	23,766	16,328
Այլ կրեդիտորական պարտքեր	244	337
Ընդամենը ընթացիկ առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	50,829	43,190

Ընկերության կրեդիտորական բոլոր պարտքերը ընթացիկ պարտքեր են, որոնք առաջանում են մեկ ամսվա ընթացքում և մարվում են հաջորդ ամսվա ընթացքում:

14 Ընթացիկ պահուստներ

Այս հոդվածում ներկայացված են աշխատակիցների կարճաժամկետ հատուցումները՝ տարեկան արձակուրդների տեսքով փոխհատուցելի բացակայությունների գծով: Պահուստավորումը կատարվում է յուրաքանչյուր տարեվերջի դրությամբ՝ տարեսկզբի մնացորդի համեմատությամբ աճի կամ նվազման գումարով՝ ճշտելով անձնակազմի գծով ծախսումները: Ակնկալվում է, որ դրամական արտահոսքերը տեղի կունենան հաջորդ տարվա ընթացքում՝ հերթական ամենամյա արձակուրդներն օգտագործելիս: Զեղչման ազդեցությունը համարվել է ոչ էական, և պահուստը չափվել է գնահատված դրամական արտահոսքերի անվանական գումարով:

2025թ. և 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության ընթացիկ պահուստները կազմել են համապատասխանաբար 9,103 հազար դրամ և 7,880 հազար դրամ:

15 Հասույթ

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ծառայությունների մատուցումից հասույթ	599,933	616,442
	599,933	616,442

Հասույթն իրենից ներկայացնում է էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայում էլեկտրական էներգիայի վաճառքով զբաղվող ընկերություններին շուկայի օպերատորի ծառայությունների մատուցումը: Ընկերության կողմից մատուցվող ծառայությունների սակագները որոշվում են ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից:

ՀՀ էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի մասնակիցներին շուկայի օպերատորի ծառայություններ մատուցելու համար 2024թ փետրվարի 1-ից մինչև 2025թ փետրվարի 1-ը ՀՀ ՀՄԿՀ կողմից սահմանվել է կայաններից գնված և արտահանված էլեկտրաէներգիայի յուրաքանչյուր մեկ կվտ ժամի դիմաց 0,0715 դրամ (առանց ԱԱՀ) միասնական սակագին, իսկ 2025թ փետրվարի 1-ից մինչև 2026թ փետրվարի 1-ը սահմանվել է 0,0671 դրամ (առանց ԱԱՀ) միասնական սակագին:

Կատարման ենթակա պարտականություններ և հասույթի ճանաչման քաղաքականություն

Հասույթը չափվում է գնորդների հետ պայմանագրերում նշված հատուցումների հիման վրա: Ընկերությունը ճանաչում է հասույթը, երբ գնորդին է փոխանցում ապրանքի կամ ծառայության նկատմամբ հսկողությունը:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է տեղեկատվություն գնորդների հետ պայմանագրերի գծով կատարողական պարտականությունների բնույթի և հասույթի ճանաչման համապատասխան քաղաքականության վերաբերյալ: Գնորդների հետ պայմանագրերի գծով կատարողական պարտականությունները սահմանված են ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից Ընկերությանը տրամադրված էլեկտրաէներգետիկական շուկայի օպերատորի ծառայության մատուցման լիցենզիայի շրջանակում գործունեություն իրականացնելու պայմաններում:

Ծառայության տեսակը	Կատարման ենթակա պարտականությունների բնույթը	Հասույթի ճանաչումը ՖՀՄՄ 15-ի համաձայն
Էլեկտրաէներգետիկական շուկայի օպերատորի ծառայություն	• Էլեկտրաէներգետիկական մեծածախշուկայում կնքված պայմանագրերի, ներկրում կամ արտահանում նախատեսող պայմանագրերի համաձայն գնված և վաճառված էլեկտրական էներգիայի (հզորության) հաշվառում, փաստաթղթերի կազմում և մեծածախ շուկայի առևտրի մասնակիցներին և ծառայություն մատուցվողներին ներկայացում, • Էլեկտրաէներգետիկական համակարգի էլեկտրաէներգիայի (հզորության) հաշվառման ավտոմատացված համակարգի շահագործում և աշխատունակ վիճակում պահպանում, • Էլեկտրական էներգիայի տեխնոլոգիական անխուսափելի կորուստների հաշվարկում, իսկ հաղորդման ցանցում նաև փաստացի կորուստների մեծությունների հաշվարկում և հաշվառում:	Էլեկտրաէներգետիկական մեծածախշուկայի մասնակիցները միաժամանակ ստանում և նախատեսված էն էլեկտրաէներգետիկական շուկայի օպերատորի ծառայությունից օգուտները՝ վերջինիս մատուցմանը զուգընթաց, և Ընկերությունը ծառայության նկատմամբ հսկողությունը փոխանցում է ժամանակի լի ընթացքում: Այ Այդ իսկ պատճառով, Ընկերությունն իր պարտականությունները կատարում և հասույթը ճանաչում է ժամանակի ընթացքում:

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Աշխատավարձ	260,848	260,086
Մաշվածություն և ամորտիզացիա	131,580	132,346
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների սպասարկման ծախսեր	103,567	96,369
Նյութական ծախսեր	6,938	5,790
Գիտատեխնիկական աշխատանքների ստացում	7,000	7,000
ISO ստանդարտների ներդրման և գործարկման աշխատանքներ	-	7,630
Գործուղման ծախսեր	6,655	3,890
Կոմունալ և այլ ծառայություններ	5,487	6,312
Ընդամենը	522,075	519,423

17

Վարչական ծախսեր

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Աշխատավարձ	112,201	108,405
Մաշվածություն և ամորտիզացիա	9,733	9,747
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների սպասարկման ծախսեր	652	776
Գործուղման ծախսեր	-	334
Գրասենյակային և կոմունալ ծառայություններ	1,918	2,116
Աուդիտորական և բանկային ծախսեր	2,588	975
Այլ	1,128	1,069
Ընդամենը	128,220	123,422

18

Այլ ծախսեր

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Պետական տուրք	5,000	5,000
Այլ վճարներ	1,063	990
Օգնություններ	850	860
Այլ	1,119	1,994
Ընդամենը	8,032	8,844

19 Ֆինանսական եկամուտներ և ծախսեր

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության բանկային ավանդների գծով հաշվեգրված եկամուտը «Կոնվերս» բանկում կազմել է 7,116 հազ. դրամ, «Արդշին» բանկում՝ 5,925 հազ. դրամ:

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Բանկային ավանդի տոկոսից եկամուտ	13,041	10,136
Ֆինանսական վարձակալության տոկոսային ծախսեր	(5,940)	(7,438)
	7,101	2,698

20 Շահութահարկի գծով ծախս

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ընթացիկ հարկ	10,011	7,313
Հետաձգված հարկ	(2,678)	4,341
	7,333	11,654

Արդյունավետ հարկային դրույքաչափի համադրումը ներկայացված է ստորև.

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)
Շահույթ մինչև հարկումը (համաձայն ՖՀՄՄ-ների)	36,888		55,417	
Շահութահարկ՝ 18% դրույքաչափով (2024թ.՝ 18%)	6,640	18	9,975	18
(Զհարկվող եկամուտ)/ չնվազեցվող ծախսեր, գուտ	693	1.88	33,788	61
Շահութահարկի գծով ծախս	7,333	19.88	43,763	79

21 Ֆինանսական գործիքներ

21.1 Հաշվապահական հաշվառման քաղաքականություններ

Ֆինանսական ակտիվի, ֆինանսական պարտավորության և բաժնային գործիքի յուրաքանչյուր դասի համար կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և ընդունված մեթոդների մանրամասները, ինչպես նաև եկամտի և ծախսերի ճանաչման չափանիշներն ու հիմքերը ներկայացված են ծանոթագրություն 2.10-ում:

21.2 Ֆինանսական գործիքների կատեգորիաները

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված մնացորդները վերաբերում են ակտիվների և պարտավորությունների հետևյալ կատեգորիաներին.

Ֆինանսական ակտիվներ

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Առևտրային դեբիտորական պարտքեր	74,667	73,675
Բանկային ավանդեր	170,583	52,211
Դրամական միջոցներ	99,921	161,205
	345,171	287,091

Ֆինանսական պարտավորություններ

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական պարտավորություններ		
Վարձակալության գծով պարտավորություններ	53,530	69,772
Առևտրային կրեդիտորական պարտքեր	9,210	9,208
	62,740	78,980

22 Ֆինանսական ռիսկի կառավարման ուղղություններ

Ընկերությունը իր բնականոն գործունեության ընթացքում ենթարկվում է շուկայական (որը ներառում է արտարժույթային), պարտքային և իրացվելիության ռիսկերի:

22.1 Ֆինանսական ռիսկի գործոններ

ա) Շուկայական ռիսկ

Ընկերության գործունեությունն ուղղակիորեն ենթարկվում է տոկոսադրույքային ռիսկերի փոփոխությունների ազդեցությանը և կապիտալի գնային ռիսկին:

բ) Արտարժույթային ռիսկ

Ընկերությունը գործարքներ է իրականացնում արտարժույթով, հետևաբար ենթարկվում է արտարժույթային ռիսկին: Արտարժույթի փոխարժեքային տատանումներից կախվածությունը հիմնականում առաջանում է կրեդիտորական պարտքերից:

գ) Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկն առաջանում է այն դեպքում, երբ պայմանագրային գործընկերը չի կատարում իր պարտավորությունները, որի հետևանքով Ընկերությունը ֆինանսական կորուստներ կարող է կրել: Հաշվետու ամսաթվի դրությամբ նշանակալի պարտքային ռիսկի կենտրոնացում առկա չէ: Առավելագույն պարտքային ռիսկը ներկայացված է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում՝ յուրաքանչյուր ֆինանսական ակտիվի հաշվեկշռային արժեքով:

դ) Իրացվելիության ռիսկ

Ընկերությունը վարում է իրացվելիության կառավարման քաղաքականություն՝ պահելով բավարար դրամական միջոցներ և դրանց համարժեքներ, ինչպես նաև բարձր իրացվելիություն ունեցող ակտիվներ՝ ժամանակին գործառնական պարտավորությունները մարելու նպատակով:

Ընկերությունն ունի արտարժույթով գնանշված հետևյալ ֆինանսական գործիքները.

Հոդված	Հայկական դրամ	ԱՄՆ դոլար	Եվրո	Ռուբլի
2025թ.				
<i>Ֆինանսական ակտիվներ</i>				
Առևտրային դեբիտորական պարտքեր	74,667	-	-	-
Բանկային ավանդներ	170,583	-	-	-
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	99,921	-	-	-
	345,171	-	-	-
<i>Ֆինանսական պարտավորություններ</i>				
Վարձակալության գծով պարտավորություններ	53,530	-	-	-
Առևտրային կրեդիտորական պարտքեր	9,210	-	-	-
	62,740	-	-	-
Զուտ արդյունք	282,431	-	-	-
2024թ.				
<i>Ֆինանսական ակտիվներ</i>				
Առևտրային դեբիտորական պարտքեր	73,675	-	-	-
Բանկային ավանդներ	52,211	-	-	-
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	161,205	-	-	-
	287,091	-	-	-
<i>Ֆինանսական պարտավորություններ</i>				
Վարձակալության գծով պարտավորություններ	69,772	-	-	-
Առևտրային կրեդիտորական պարտքեր	9,208	-	-	-
	78,980	-	-	-
Զուտ արդյունք	208,111	-	-	-

23 Իրական արժեք

Ղեկավարության համոզմամբ՝ ֆինանսական հաշվետվություններում ամորտիզացված արժեքով ճանաչված ֆինանսական ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները գրեթե հավասար են դրանց իրական արժեքին:

24 Կապիտալի կառավարում

Ընկերությունն իր կապիտալը կառավարում է այնպես, որպեսզի ապահովի իր անընդհատ գործելու հնարավորությունն առավելագույնին հասցնելով բաժնետերերի եկամուտները փոխառու և կապիտալ միջոցների օպտիմալ համապատասխանություն ապահովելու միջոցով:

Ընկերության կապիտալը կազմված է սեփական կապիտալից, որը ներառում է թողարկված կապիտալը, կուտակված շահույթը, ինչպես նաև փոխառու միջոցները, որոնք ներառում են փոխառությունները՝ բացահայտված ծանոթագրություն 11-ում:

Ընկերության ղեկավարությունը պարբերաբար վերանայում է կապիտալի կառուցվածքը, որպեսզի ապահովի փոխառու միջոցների և սեփական կապիտալի մնացորդների առավելագույն օպտիմալ համապատասխանություն, որը վերլուծվում է՝ ընդհանուր կապիտալը բաժանած ընդհանուր ֆինանսավորման վրա:

Հաշվարկը ներկայացված է ստորև.

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ընդհանուր սեփական կապիտալ	398,981	378,947
Հանած՝ դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	(99,921)	(161,205)
Կապիտալ	299,060	217,742
Ընդհանուր սեփական կապիտալ	398,981	378,947
Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական պարտավորություններ	53,530	69,772
Ընդհանուր ֆինանսավորում	452,511	448,719
Կապիտալի և ընդհանուր ֆինանսավորման հարաբերակցություն	0.66	0.49

25 Պայմանականություններ

ա. Գործարար միջավայր

Համաշխարհային տնտեսությունը շարունակում է գործել բարձր անորոշության պայմաններում՝ պայմանավորված աշխարհաքաղաքական լարվածությամբ, տարածաշրջանային հակամարտություններով և ֆինանսական շուկաների տատանումներով: Մասնավորապես, Ուկրաինայի շուրջ զարգացումները, ինչպես նաև Մերձավոր Արևելքում շարունակվող լարվածությունը, շարունակում են ազդել համաշխարհային տնտեսական ակտիվության, ներդրումային հոսքերի և սպառողական վարքագծի վրա:

Միևնույն ժամանակ, միջազգային սպորտային ոլորտը, այդ թվում՝ ֆուտբոլը, աստիճանաբար վերականգնվում է COVID-19 համավարակից հետո, ինչը նպաստում է տոմսերի վաճառքի, հովանավորչական եկամուտների և հեռարձակման իրավունքներից ստացվող եկամուտների աճին: Այնուամենայնիվ, ոլորտը շարունակում է մնալ զգայուն տնտեսական և քաղաքական փոփոխությունների նկատմամբ:

Հայաստանի Հանրապետությունում տնտեսական ակտիվությունը վերջին տարիներին պահպանել է աճի միտում, սակայն շարունակում է ենթարկվել արտաքին գործոնների ազդեցությանը՝ ներառյալ փոխարժեքի տատանումները, գնաճային ճնշումները և տարածաշրջանային ռիսկերը:

Վերոնշյալ պայմաններում ընկերության ղեկավարությունը մշտապես գնահատում է արտաքին միջավայրի ազդեցությունը և ձեռնարկում է համապատասխան միջոցներ՝ ապահովելու գործունեության շարունակականությունը և ֆինանսական կայունությունը:

Վերոնշյալ իրադարձությունները կարող են հետագայում էական ազդեցություն ունենալ Կազմակերպության ապագա գործունեության և ֆինանսական կայունության վրա, որոնց ամբողջական հետևանքները դժվար է կանխատեսել ներկա պահին: Ապագա տնտեսական և քաղաքական իրավիճակը և վերջիններիս ազդեցությունը Կազմակերպության գործունեության վրա կարող են տարբերվել Կազմակերպության ղեկավարության ներկա սպասումներից:

Տվյալ ֆինանսական հաշվետվությունները չեն արտացոլում վերը նկարագրվածի հնարավոր ապագա ազդեցությունը Կազմակերպության գործունեության վրա:

բ Ապահովագրություն

Հայաստանի Հանրապետության տնտեսության զարգացման ներկա փուլում ապահովագրության շատ տեսակներ զարգացման սկզբնական փուլում են և լայնորեն չեն կիրառվում: Սա է պատճառը, որ Ընկերությունն ապահովագրված չէ գործունեության ընդհատման, ակտիվների կորստի կամ այլ անձանց կողմից պարտավորությունների չկատարման հետևանքով վնասներ կրելու իրադարձություններից: Քանի դեռ Ընկերությունն ապահովագրված չէ համապատասխան ռիսկերից, առկա է ակտիվների կորստի կամ ոչնչացման վտանգ, ինչը կարող է անբարենպաստ ազդեցություն ունենալ նրա գործունեության և ֆինանսական վիճակի վրա: Բացառություն են կազմում սեփականատերերի կողմից ավտոմեքենաների պարտադիր ապահովագրությունները, որոնք հատուցում են վթարի դեպքում երկրորդ կողմին պատճառված վնասները:

գ Հարկեր

Հայաստանի Հանրապետության հարկային համակարգը համեմատաբար նոր է՝ հաճախակի փոփոխվող օրենսդրությամբ, որը հաճախ պահանջում է մեկնաբանություններ: Հաճախ տարբեր հարկային և իրավասու մարմիններ ունեն տարբեր մեկնաբանություններ: Հարկերը ենթակա են վերանայման և ուսումնասիրության հարկային մարմինների կողմից, որոնք օրենքով լիազորված են առաջադրել տուգանքներ և տույժեր:

դ Շրջակա միջավայրի հետ կապված խնդիրներ

Ղեկավարության համոզմամբ Ընկերությունը բավարարում է շրջակա միջավայրի հետ կապված Կառավարության պահանջները, և վստահ է, որ Ընկերությունը շրջակա միջավայրի հետ կապված ընթացիկ էական պարտավորություններ չունի: Այնուամենայնիվ, Հայաստանի Հանրապետությունում, շրջակա միջավայրի վերաբերյալ օրենսդրությունը զարգացման փուլում է, և դրա հավանական փոփոխություններն և օրենսդրության մեկնաբանություններն ապագայում են կարող են էական պարտավորություններ առաջացնել:

ե Դատական հայցեր

2025թ. դեկտեմբերի 31-ի և սույն ֆինանսական հաշվետվությունների վավերացման ամսաթվի դրությամբ Ընկերության դեմ հարուցված դատական հայցեր կան, սակայն էական ազդեցություն չունեն ֆինանսական հաշվետվությունների վրա:

զ Հաշվետու ամսաթվից հետո տեղի ունեցող դեպքեր

Ընկերությունը չի կնքել այնպիսի պայմանագրեր, որոնք, կախված ապագա որևէ դեպքի/դեպքերի տեղի ունենալուց կամ չուենալուց, ենթադրում են հետագա վճարումներ:

26 Գործարքներ կապակցված կողմերի հետ

26.1 Վերահսկողություն

Ընկերության բաժնետոմսերի 100%-ը պատկանում է Հայաստանի Հանրապետությանը:

Ընկերությունն իր գործունեության ընթացքում իրականացնում է գործարքներ կապակցված կողմերի հետ: Կապակցված կողմերի հետ իրականացված գործարքները հետևյալն են.

1. Գործարքներ կապակցված կողմերի հետ

Հազար դրամ	Մնացորդը 2025թ. դեկտեմբերի 31- դրությամբ	2025թ.	Մնացորդը 2024թ. դեկտեմբերի 31- դրությամբ
Հայտարարված և վճարված շահաբաժիններ	-	(9,521)	9,521
			-
	Մնացորդը 2024թ. դեկտեմբերի 31- դրությամբ	2024թ.	Մնացորդը 2023թ. դեկտեմբերի 31- դրությամբ
Հայտարարված և վճարված շահաբաժիններ	-	(11,163)	11,163
			-

2. Գործարքներ ղեկավարության հետ

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Աշխատավարձ և դրան հավասարեցված վճարումներ	53,413	44,775
	53,413	44,775